Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 6

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ՝

2010Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2009-2010 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակին և Հակոբ Օշականի ստեղծագործություններին նվիրված գիտական նստաշրջանների նախապատրաստության հարցը:
3. Սփյուռքի նախարարության և հայ բանասիրության ֆակուլտետի կողմից «Արևմտահայերենի վաղվա օրը» թեմայով կլոր սեղանի կազմակերպման հարցը:
4. Ասպիրանտուրայի ուսուցումը կրեդիտային համակարգի փոխանցելու հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

1-ին հարցի առիթով ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ դեկանատն ընդհանուր առմամբ գոհ է ֆակուլտետում ավարտված ընթացիկ ստուգումների ու ընթացիկ քննությունների արդյունքներից. չեն նկատվել արտառոց դեպքեր:

2-րդ հարցի առիթով տեղեկություններ հաղորդեցին ամբիոնների վարիչները՝ պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը: Նրանք մասնավորապես ասացին, որ իրենց ամբիոններում արդեն կատարում են նախապատրաստական աշխատանքներ, և պրոֆեսորադասախոսական անձնակազմին հանձնարարվել է պատրաստել զեկուցումներ՝ հրապարակային ելույթներին ու գիտական նստաշրջաններին ակտիվորեն մասնակցելու համար:

Ֆակուլտետի խորհրդի անդամներն այնուհետև քննարկեցին Սփյուռքի նախարարության և հայ բանասիրության ֆակուլտետի կողմից «Արևմտահայերենի վաղվա օրը» թեմայով կլոր սեղանի կազմակերպման հարցը, և սփյուռքագիտության ամբիոնին (վարիչ՝ պրոֆ. Յու. Ավետիսյան) հանձնարարվեց միացյալ ջանքերով առաջիկայում առաջիկայում կազմակերպել քննարկումներ թե՛ ԵՊՀ-ում և թե՛ Սփյուռքի նախարարությունում:

Ասպիրանտուրայի ուսուցումը կրեդիտային համակարգի փոխանցելու հարցի առիթով որոշ պարզաբանումներ տվեցին պրոֆեսորներ Ա. Ավագյանը և Ն. Հարությու-

նյանը՝ նկատելով, որ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել խնդրո առարկային:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ	ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ